ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
«ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան «22» « 08 » 2022թ.

Ժամը՝ 11:30

Հանձնաժողովի նախագահ՝

Վանուշ Իսկանդարյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ (հանձնաժողովի նախագահ, ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝

Վահե Խաչատրյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Լևոն Մանասարյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության վարչատնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Սոսե Հակոբյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության ավագ մասնագետ (ԳՊ/ ԲԱ)

Գրիգոր Ծատինյան - վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պարետ (ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝

Նաիրա Մկրտչյան - Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ

---

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

1.1 «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/14» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2022 թվականի օգոստոսի 22-ին ժամը 11:30-ին էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտը ընդունվել է համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

1.3 Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը /անվանումը և էլեկտրոնային փոստի հասցեն/:

N	Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	հեռախոս
1	«ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ	proekt800@inbox.ru	041 038 000

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), համապատասխան կազմված լինելու մասին

2.1 «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ընթացակարգի միակ մասնակցի՝ «ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ փաստաթղթերը.

- Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի
- Հայտի ապահովում՝ կանխիկ վճարման հանձնարարականի անդորրագիր
- Ծավալաթերթ-նախահաշիվ
- Իրական շահառուների մասին հայտարարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի
- Գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Հ/Բ	Աշխատանքի անվանումը	աշխատանքի նախահաշվային արժեքը / ՀՀ դրամ/	Մասնակցի անվանումը	ՀՀ դրամ	
				Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	44 121 991	«ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ » ՍՊԸ	32 325 000	38 790 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

4. «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/14» ծածկագրով ընթացակարգի բացման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1.1 կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-22/14» ծածկագրով Հրավերի ՄԱՍ 1, 8.7-րդ կետը ՝

ա) կասեցնել նիստը

բ) միակ մասնակցին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ

Բանակցությունները տեղի կունենան սույն թվականի օգոստոսի 24-ին, ժամը 14:30-ին՝« ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 ՝ 2-րդ հարկ 226 սենյակ» հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունը՝

Նախագահ՝	Վ. Իսկանդարյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Վ. Խաչատրյան	ԳՊ/ԳԱ
	Լ. Մանասարյան	ԳՊ/ԳԱ
	Ս. Հակոբյան	ԳՊ/ԲԱ
	Գ. Ծատինյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ն. Մկրտչյան	ԳՊ/ՄՀմ